ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0:37

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. կրթություն, դպրոց, հայրենասիրություն, մանկավարժ, պարբերական, հրատարակություն, դասագիրք, մանկապատանեկան մամուլ, ժողովրդական բանահյուսություն, գրականություն:

Ключевые слова и выражения: образование, школа, патриотизм, педагог, газета, заголовок, издание, учебник, детский пресс, фольклор, литература.

Key words and expressions: education, school, patriotism, pedagogue, periodical, headline, edition, textbook, children press, folklore, literature.

Յուրաքանչյուր ժողովուրդ իր լեզվով, բառ ու բանով, հոգևոր մշակույթով, սովորություններով և ավանդույթներով այն պարարտ հողն է, որտեղ ձևավորվում ու ծլարձակում է ազգային բնավորությունը: Ազգային միջավայրը բնավորության ձևավորման համար բնության դեր է կատարում: Հակոբ Պարոնյանն այն կարծիքին էր, որ կրթության և դաստիարակության հիմքը պետք է լինի մայրենին. այն ոչ միայն մտքեր փոխանակելու միջոց է, այլև մտածողության եղանակ, ժողովրդի պատմություն, խտացված բնավորություն, որ միայն նրա միջոցով կարող են երեխայի հոգու խորքը թափանցել ժողովրդական բանահյուսության ինքնատիպ թովչանքը, դարերի խորքից եկող ազգային սովորույթներն ու ավանդույթները:

Հակոբ Պարոնյանի մանկավարժական հայացքները բազմաբնույթ են իրենց նպատակաուղղվածությամբ: Երգիծաբանին հավասարապես հուզել են դպրոցի կազմակերպման ու գոյության, ուսուցիչների պատրաստականության, դասագրքերի, ծրագրերի ու պլանների, ուսուցման, կրթության ու դաստիարակության հարցերը: Իր առաջարկած դաստիարակչական խնդիրներին համապատասխան՝ նա «Թատրոն. Բարեկամ մանկանց» պարբերականում տպագրում էր «պարզ ոճով շարադրված բարոյական պատմություններ, միտք բացող հրահանգներ, զանազան գիտությանց վերաբերյալ նախնական ծանոթություններ, առակներ, խաղեր, հանելուկներ»:

«Այսօր արդեն թերևս քչերը գիտեն,- նկատում է գրականագետ Ալ. Մակարյանը,- որ Հակոբ Պարոնյանը (1843-1891)՝ «հայ կյանքին և հայ բարոյականին վրա հսկող անաչառ դատավորը» (Մ. Ճանաշյանի

բնորոշումն է), ում սրատես հայացքից չի վրիպել 19-րդ դարի երկրորդ կեսի մեր իրականության մեջ տեղ գտած ամեն մի արատավոր երևույթ՝ լիներ դա քաղաքական թե սոցիալական, կենցաղային թե բարոյական, ում երգիծանքի սլաքներից սարսափում էին անգամ հայ ազգայի երևելիները, ով երկնել է համաշխարհային մրցակցության գնացող երգիծական բացառիկ ուժի երկեր, հեղինակն է նաև հայ մանկական առաջին պարբերականի: Նա Կ. Պոլսում 1876 թվականի հունվարի 1-ից, իր խմբագրած հիմնական՝ «Թատրոն» երգիծաթերին զուգընթաց, հայ երեխաների համար սկսում է հրատարակել մի պատկերազարդ երկշաբաթաթերթ՝ «Թատրոն. Բարեկամ մանկանց» անվանմամբ»[1]:

Այսպիսով, մեծ երգիծաբանը «իբրև որբ՝ դաստիարակության վերաբերյալ ամեն վայելքե զուրկ մնացած» հայ մանուկների համար դնում էր նրանց պահանջները լիովին բավարարող մանկական գրականության ամուր հիմքերը: Հետամուտ ազգային կրթության զարգացմանը՝ նա հայ մանուկների ճշմարիտ դաստիարակության առաջին նախապայմանն էր համարում հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության իմացությունը:

Պարոնյանն իր թերթի միջոցով ծնողներին ու դաստիարակներին գործնական խորհուրդներ էր տալիս, թե ինչ պիտի անի նրանցից յուրաքանչյուրը «պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի» պատրաստելու համար: Այդ քաղաքացու առաջին հատկանիշը հայրենասիրությունն է: Դպրոցի նպատակն էլ ամենից առաջ հայրենասերներ դաստիարակելն է, ուստի մանկավարժ Պարոնյանն առաջին հերթին իր փոքրիկ ընթեր-ցողներին ներշնչում է հայրենասիրական վեհ գաղափարներ. «Որ ազգեն ալ որ ըլլաս, ինչ վիճակի մեջ ալ որ գտնվիս, դու պահապան զինվոր մըն ես հայրենիքիդ, նա ալ իրավունք ունի քու գիտությանդ,առաքինությանդ, զգացմանդ և բոլոր գործերուդ արդյունքը վայելելու: Մի հարցուներ թե ինչ է քու պարտքդ հայրենիքիդ. սիրե ու կը սիրվիս: Զինվո՞ր ես, հայրենիքիդ ծառայել մտածե, արհեստավո՞ր, գիտո՞ւն, հայրենիքիդ օգուտը խորհե և ուրիշին սորվեցուր»[2]:

Մանուկների համար գրված երկերի նպատակն էր երեխաներին սովորեցնել լինել աշխատասեր, շիտակ, ճշմարտախոս, խոհեմ, համարձակ, հարգել ծնողներին ու մեծերին, օգնել փոքրերին ու թույլերին: Կրթությունը ոչ մի արժեք չի ունենա, եթե դպրոցից դուրս գալուց հետո տղան կամ աղջիկը չի կարողանում նամակ գրել, պահել տան ծախսերի հաշիվը, ուստի

---

[1] **Մակարյան Ալ.**, Հայ մանկական առաջին պարբերականը, «Հասկեր. Մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք», Երևան, 2010, թիվ 1, էջ 4:

[2] «**Թատրոն. Բարեկամ մանկանց**», լրագիր, Կ. Պոլիս, 1877, թիվ 25, էջ 99:

Պարոնյանը համբերատար հրահանգում է, թե ինչպես նամակ գրել հարազատներին ու բարեկամներին, օրագիր պահել, օրվա ծախսերը գրանցել: Այսպիսի հմտություններ ձեռք բերելու համար ևս պետք է սիստեմատիկ վարժություններ կատարել. «Ամեն բան վարժությամբ կը սորվվի. «ես չեմ գիտեր, չեմ կրնար գրել» ըսելով բան մ' ալ կարելի չէ սորվիր այս աշխարհիս մեջ»[3]: Խաղը, զվարճությունը, զբոսանքն անհրաժեշտ են մանկան համար, սակայն այդ բոլորը չպետք է խանգարեն դասերին: Հանձնարարելով զանազան հանելուներ, խաղեր, այդ թվում՝ ձեռնածության պարզ վարժություններ՝ նա միաժամանակ զգուշացնում էր իր ընթերցողներին դրանցով զբաղվել «ուսումնական պարտավորությունները կատարելեն ետքը»:

Առաջին հայացքից Պարոնյանի մանկավարժական ժառանգությունը բավական սակավ է: Դրա պատճառը թերևս դրա՝ տարբեր ժամանակներում, տարբեր թերթերում ու ամսագրերում ցրված լինելն է: Այն կարելի է բաժանել երկու մասի: Մի մասն ընդհանուր մանկավարժական բնույթի հոդվածներն ու մտքերն են, որոնք նպատակամղված են հասարակության կրթալուսավորական և բարոյական խնդիրներին: Դրանք տարածված են Պարոնյանի բոլոր ստեղծագործություններում և հաճախ արտահայտվում են հերոսների բերանով կամ հեղինակային նուրբ միջամտություններով: Սրանց շարքին են պատկանում նաև անկրկնելի աֆորիզմները, «Բառարանների այլակերպությունները», «Խայթուածքները» և այլն: Երկրորդ մասը զուտ մանկավարժական բնույթի հոդվածներ են, որոնք կոնկրետ նպատակաուղղված են դպրոցի, կրթության, ուսուցման ու դաստիարակության խնդիրներին: Սրանք հիմնականում զետեղված են «Մեղու»-ում, «Թատրոն»-ում, «Խիկար»-ում և «Թատրոն. Բարեկամ մանկանց»-ում: Նշենք, որ կոնկրետ մանկավարժական բնույթի հոդվածները Պարոնյանը գրել է 1876-1886 թթ. այսինքն՝ մանկավարժական պրակտիկ գործունեություն ծավալելուց հետո՝ ավելի երկար մշակման ենթարկելով սեփական և այլ մանկավարժական տեսական եզրակացությունները:

Մանկավարժական ժառանգության առաջին մասում Պարոնյանը կրքոտ ու անհաշտ է, հաճախ չափից դուրս տաքարյուն, երբեմն էլ անզգույշ: Երկրորդ մասում նա խիստ զգուշավոր է ու չափավոր, շրջահայաց ու զսպված: Եթե առաջին մասում զգացվում է մեծ երգիծաբանն ու

[3] Նույն տեղում, 1876, թիվ 17, էջ 132:

հասարակական մանկավարժը, ապա երկրորդ մասում գերակշռում է լրջմիտ ու հոգատար ուսուցիչը, իմաստուն դաստիարակը[4]:

Բոլոր ժամանակներում էլ գիտական միտքը ուշադրության կենտրոնում է պահել գիտության և պրակտիկայի փոխհարաբերության հիմնախնդիրը: Բանն այն է, որ այդ փոխգործակցությամբ է պայմանավորված երկուսի զարգացումն էլ: Ակնհայտ է, որ շրջապատն ու միջավայրը մեծ ազդեցություն են ունենում մանկան բնավորության ձևավորման վրա: Երեխան առաջին հերթին սովորում է ծնողներից: Պարոնյանը կարծում էր, որ շատ ու շատ հայ ընտանիքներում բացակայում է կուլտուրական նիստուկացը: Ուստի նա իր երկշաբաթաթերթում պարբերաբար տպագրում էր քաղաքավարություն ուսուցանող հոդվածներ:

Պարոնյանը բարձր է գնահատել ուսուցչի դերը հասարակական կյանքում: Ուսուցիչը կոչված է լինելու ստեղծագործ անհատ իր ոլորտում: Երգիծաբանն ուսուցչի աշխատանքը համարում է Քրիստոսի խաչելություն՝ հանուն լուսավորության, և ամեն ազգ պարտավոր է պատշաճը մատուցել իր ուսուցիչներին: «Դասատուները չեն, որ ազգին հացը կուտեն, այլ ազգն է, որ անոնց հացը պիտի ուտե: Ամենափոքր դասատու մը ամենամեծ հարուստեն ավելի, շատ ավելի կծառայե ազգին և անոր համար ավելի պատվո և հարգանաց արժանի է. Կը խնդրենք մեր լուրջ լրագիրներեն որ դասատուաց վիճակին վրայ երկարորէն գրեն, ամեն օր գրեն, ամեն ճիգ թափեն անոնց վիճակն բարվոքելու, որովհետև եթե օր մը ազգերնիս լուսավորվի՝ ոչ թաղական աղաեն մը, ոչ սերիե էֆնտիե մը պիտի լուսավորվի»[5],- գրում է Պարոնյանը:

Կրթական համակարգի վերակառուցման հետ կապված՝ Պարոնյանն առաջարկում էր բարելավել ուսուցչության վիճակը: Նա մի կողմից ձաղկում էր ուսուցիչների մի մասի տգիտությունն ու պահպանողականությունը, մյուս կողմից դնում նրանց հեղինակության հարցը: Ուսուցման գործընթացում առավել կարևոր էր համարում դասագրքերի դերը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայ մանկական առաջին պարբե-րականը՝ «Թատրոն. Բարեկամ մանկանց»-ը, հեղինակը հրատարակում էր որպես դասագիրք:

Պարոնյանը, մոտ լինելով երեխաներին, ուսումնասիրում էր նրանց հոգեբանությունը, ծանոթանում դպրոցական ցածր ու միջին տարիքի երեխաների հետաքրքրություններին: Ահա թե ինչու «Թատրոն. Բարեկամ

---

[4] Տե՛ս **Սարգսյան Ա.**, Հ. Պարոնյանի մանկավարժական հայացքներն ու ժառանգությունը, Երևան, 1991, էջ 39:

[5] «Թատրոն», լրագիր, Կ. Պոլիս, 1876, թիվ 194:

մանկանց»-ում տպագրված բոլոր նյութերն էլ հոգեհարազատ էին հայ մանուկներին:

Այսուհանդերձ, Պարոնյանը լուրջ պահանջներ էր ներկայացնում ուսուցիչներին և դպրոցի տնօրեններին: Ուսուցչի կերպարում առաջնությունը տալիս էր բարոյականին: Մանկավարժից է կախված, թե ինչ կդառնա երեխայի սիրտը՝ քնքուշ ծաղիկ, թե չորացած կեղև: Յուրաքանչյուր խելացի մանկավարժի նվիրական երազանքն է, որ սանի սիրտը լինի զգայուն դեպի իր՝ դաստիարակի յուրաքանչյուր բառը, որպես-զի մակական հոգին արձագանքի, ինչպես քնքուշ մի լար, դաստիարակի հոգու նուրբ երաժշտությանը:

Ուսումնական խորհրդի, նրա առանձին անդամների գործունեությանը Պարոնյանն անդրադարձել է բազմիցս: Նա ուսումնական խորհրդի դերը տեսնում էր ազգային բոլոր դպրոցների միասնական ղեկավարման մեջ: Սակայն, ցավոք, անընդհատ ընտրվող ու վերընտրվող ուսումնական խորհրդի անդամները ժամանակ էին վատնում ավելորդ վիճաբանությունների վրա՝ ինքնահոսի թողնելով ազգային դպրոցների կառավարումը: Նրա հաստատ համոզմամբ ազգային դպրոցների վիճակը կարելի էր բարելավել եթե ոչ լիովին ու նյութապես, գոնե առաջավոր մեթոդների ու սկզբունքների մշակմամբ: Այլապես ստացվել էր այնպես, որ տարբեր դպրոցներ դասավանդում էին տարբեր եղանակներով: Հաճախ նույն թեման տարբեր բովանդակություն էր ստանում տարբեր դպրոցներում: Ուսումնական խորհուրդը այս և նման հարցեր պետք է լուծեր, սակայն անդամալույծի անգործության էր մատնված, որի համար էլ Պարոնյանի գրիչը հաճախ ուղղվում էր նրա դեմ:

Երգիծաբաը կոնկրետ օրինակներով փաստարկում է գոյություն ունեցող կրթական համակարգի արատավոր կողմերը և Ուսումնական խորհրդին թելադրում իր ժամանակի պահանջներին համապատասխանող ուսումնական ծրագրի մշակման անհրաժեշտության գաղափարը: Նա կարծում էր՝ հայկական ժողովրդական դպրոցի ուսումնական ծրագիրը պետք է անպայման հաշվի առնի սուլթանական բռնապետության պայմաններում ապրող հայ ժողովրդի տնտեսական, իրավական և քաղաքական վիճակը: Այդ ուսման ծրագրում առաջնությունը պիտի տրվի այն գիտություններին, որոնք ավելի օգտակար են ու կարևոր «ազգային մանկտին» կյանքի համար նախապատրաստելու գործում և համապատասխանում են «մեր ազգին արդի կացության պահանջմանց»:

Պարոնյանը դեմ էր եվրոպական դպրոցների ուսումնական ծրագրերը նույնությամբ հայկական դպրոց տեղափոխելու տրամադրություններին և նախազգուշացնում էր, որ «մեր վիճակը շատ տարբեր է Ֆրանսիայի, Գերմանիայի վիճակեն, հետևապես անոնց ուսմանց ծրագիրներն

նույնությամբ չենք կարող ընդունիլ»[6]: Բայց սա չի նշանակում, որ Պարոնյանը ցանկանում էր հայ դպրոցը մեկուսացնել արտաքին աշխարհից, առաջավոր մանկավարժության փորձից ու նվաճումներից: Ընդհակառակը, նա պաշտպանում էր եվրոպական դպրոցների ուսման պլաններում եղած նորն ու օգտակարը, սակայն պահանջում էր հրաժարվել հյակական վարժարանների ուսման պլանները չափից ավելի այլազան առարկաներով, մանավանդ լեզուներով ծանրաբեռնելու տրամադրություններից, ընտրել ամենակարևոր առարկաները, խորհուրդ էր տալիս դրանց ժամերը բաշխելիս պահպանել որոշակի համամասնություն:

Պարոնյանը անհանդուրժելի էր համարում հայկական դպրոցների դասավանդման մեթոդներում իշխող խառնաշփոթությունը: Հասկանալի է, որ պետական հսկողությունից դուրս գտնվող, ըստ էության մասնավոր դպրոցները, որոնք գործում էին պատրիարքարանի հսկողությամբ և բանկչության տնտեսական օժանդակությամբ, միասնական մանկավարժական մեթոդական սկզբունքներով չէին կարող ղեկավարվել: Սակայն նկատելիէր, որ յուրաքանչյուր վարժարանի հոգաբարձության տնօրենի անձնական նախասիրությունները ամեն դպրոց տանում էին տարբեր ուղղությամբ, ինչպես դիպուկ կերպով ասել է երգիծաբանը, «մին ֆրանսիական դրությունը կը պաշտպանե, ուրիշ մը գերմանական դրության վրա կը հարձակի, երրորդ մը անգղիական դրությունը փրկարար միջոց կը նկատե, չորրորդ մը թրքական դրութենեն մազիվ չափ չշեղիր, հինգերորդ մը ավստրիական դրությունը կը փաստաբանե»[7]:

Պարոնյանի մանկավարժական հայացքները հիմնականում ամփոփված են «Թատրոն. Բարեկամ մանկանց» հանդեսում: Երգիծաբան խմբագիրն ուսուցման գործընթացի խնդիրները տեսնում էր գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաղորդման ու ձևավորման, մտածողության զարգացման մեջ:

Պարոնյանի մանկավարժական գործունությունը խիզախություն էր ժամանակի համար, որովհետև նա լավ գիտեր, որ ուսուցչի աշխատանքը նյութական ապահովություն չէր խոստանում, այլ ավելի շատ ազգային, հասարակական և լուսավորական ծառայություն էր: Մանկավարժական գործունությանը նա վերաբերվել է ամենայն պատասխանատվությամբ՝ գործունեության հիմքում դնելով ուսուցման գլխավոր նպատակները:

---

[6] **Պարոնյան Հ.**, ԵԼԺ, Երևան, 1948, հ. 11, էջ 231:

[7] Նույն տեղում, 1934, հ. 4, էջ 178:

Կրթության բովանդակության հարցում Պարոնյանը ցուցաբերում էր առաջավոր մոտեցում: Նա չէր ընդունում զուտ ձևական կրթության առաջնությունը, այլ ընտրում էր «օգտակարագույնը» տվյալ սոցիալ-քաղաքական իրավիճակի համար: «Օգտակարագույնից» ելնելով՝ նա առաջարկում էր իր ծրագիրը, դասագիրքը և տալիս դրանց համապատասխան անցնելիք ուսումնական առարկաները: Այն կարծիքին էր, որ ցանկացած դպրոց կարիք ունի պետական և ազգային հոգատարության: Ուսուցման ամենակարևոր առարկաները համարում էր մայրենի լեզուն, թվաբանությունը, աշխարհագրությունը, ազգային պատմությունը: Պարոնյանն առաջարկում էր բացել նախակրթարաններ, որտեղ պետք է սովորեին հատկապես տնանկ ու որբ երեխաները: Հնարավորություն ունեցողների համար նա առաջարկում էր վճարովի կրթություն՝ ելնելով նրանից, որ դպրոցները հիմնականում պետք է գոյություն ունենային ժողովրդական միջոցների հաշվին: Հարկ էր համարում անվճար կրթություն սահմանել միայն աղքատ երեխաների համար և դպրոցների գործունությունը չսահմանափակել միայն կենտրոններում, այլև հեռավոր գյուղերում: Ասել է թե՝ պաշտպանում էր կրթության պարտադիր ու համընդհանուր սկզբունքը:

Ինչպես հասարակական-քաղաքական կյանքի, գրականության, թատրոնի, այնպես էլ դպրոցի հարցերը քննարկելիս Պարոնյանը պաշտպանել ու զարգացրել է Միքայել Նալբանդյանի գաղափարները, պայքարել դրանց կեսագործման համար: Նա ընդգծում էր, որ հայ ազգի ամենաոխերիմ թշնամիներից մեկը տգիտությունն է, որ «հիվանդությանց սոսկալին է և թշվառությանց ողորմելին»: Ազգ ասելով՝ գրողը ևս նկատի ուներ հասարակ ժողովրդին և ոչ թե նրանց, ովքեր, Նալբանդյանի բնորոշ-մամբ, «արծաթե սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերևույթից»: Պարոնյանը բարձրացնում էր մայրաքաղաքում և գավառներում գործող այն դպրոցների գործունեությունը բարելավելու հարցը, որտեղ ուսուցումը տարվում էր մայրենիով: Այստեղ նա ջերմորեն պաշտպանում էր Նալբանդյանի այն տեսակետը, թե հայ երեխան ամենից առաջ «պարտական է քաջանալ» իր մայրենի լեզվի մեջ, որովհետև մայրենի դաստիարկության մեջ է ազգի ապագայի սաղմը: Սակայն Պարոնյանը միաժամանակ ցույց է տալիս «մայրենի դաստիարակության» ճանապարհին ընկած խոչընդոտները: Պոլսում և գավառներում գործող դպրոցները արևմտահայ ազգային մարմինների՝ պատրիարքարանի, Ազգային ժողովի և նրա ուսումնական խորհրդի թողտվությամբ գտնվում էին անմխիթար վիճակում: Ընդհանուր առմամբ դպրոցները գտնվում էին «ամուլ» վիճակում, «կանոնավոր խեղճության մեջ», «հեռի աշակերտները գոհացնելե». դպրոցի ստորին դասարաններում ամբողջ ուսուցումը սահմանափակվում էր կրո-

նական գրքերի ուսուցմամբ: Ազգային մարմինները Կ. Պոլսի 40 թաղական վարժարաններում, որոնցից 37-ը նախակրթարանի աստիճան ունեին, ցանկանում էին բարի քրիստոնյաներ դաստիարակել, միայն գրաճանաչ դարձնելով՝ նրանց մեջ արմատավորել կրոնական նախապաշարումները: Երգիծաբանը չէր չափազանցնում, երբ Պոլսի թաղական վարժարանների առօրյան նկարագրելիս նշում էր. «Առավոտե մինչև կեսօր եկեղեցական երգերու վարժություն, կեսօրեն վերջը քերական, Սաղմոս, Նարեկ և քիչ միչ մը ալ պնակիտի վրա վարժություն»[8]:

ՀՀ կրթական համակարգը, որն այսօր ներգրավված է ժամանակակից սոցիալ-տնտեսական բարեփոխումների մեջ, միտված է լուրջ փոփոխություններ կրելու: Այդ դրական միտումները բախվում են պրակտիկայում կիրառվող հնացած մեթոդների և տեխնոլոգիաների բարեփոխումների դանդաղ տեմպին: Խոսքը վերաբերում է ոչ միայն դասավանդման մեթոդներին ու հնարներին, այլև կրթական համակարգի երկու սուբյեկտների՝ ուսուցչի և աշակերտների համագործակցության ձևերի փոփոխությանը: Բայց և այնպես, որքան էլ հեռանում ենք Պարոնյանի ապրած ժամանակաշրջանից, միևնույնն է, նրա քարոզած մարդասիրությունն ու հայրենասիրությունը, մայրենիի կարևորության գիտակցությունը, ուսուցչի բարոյական կերպարի ու բարոյականի դասերը այսօր էլ բարեհունչ են:

Լ. Հարությունյան

Հակոբ Պարոնյանի մանկավարժական հայացքները

Ամփոփում

Հակոբ Պարոնյանի մանկավարժական գործունությունը ցույց է տալիս, որ նա ծանոթ էր առաջավոր մանկավարժական տեսություններին: Մանկավարժական գործունությանը նա վերաբերվել է ամենայն պատասխանատվությամբ՝ գործունեության հիմքում դնելով ուսուցման գլխավոր նպատակները: Նրան հավասարապես հուզել են դպրոցի կազմակերպման ու գոյության, ուսուցիչների պատրաստականության, դասագրքերի, ծրագրերի ու պլանների, ուսուցման, կրթության ու դաստիարակության հարցերը: Պարոնյանի մանակավարժական ժառանգությունը կարելի է բաժանել երկու մասի. մի մասն ընդհանուր մանկավարժական բնույթի հոդվածներ ու մտքեր են, մյուսը՝ զուտ մանկավարժական բնույթի հոդվածներ, որոնք կոնկրետ նպատակա-

[8] Նույն տեղում, էջ 200:

ուղղված են դպրոցի, կրթության, ուսուցման ու դաստիարակության խնդիրներին:

Л. Арутюнян

Педагогические взгляды у Акопа Пароняна

Резюме

Педагогический деятельность у Акопа Пароняна показывает, что он был знаком с главным педагогической теории. Он относился ответственно педагогической деятельности, на основе деятельности вставля важные учебные целы. Его волновал существования школы, подготовки учителей, учебники, программы и планы, вопросы образования и воспитания. У Пароняна Педагогическое наследие можно разделить на две части. Первая общие педагогические статьи и идеи . Вторая часть педагогические статьи специально для школы, образование, обучение и образование.

L. Harutyunyan

Hakob Paronyan's pedagogical views

Summary

According to Paronyan`s pedagogical activity he was familiar with foremost pedagogical theories. He treated pedagogical activity with a great responsibility putting main aims of teaching on the basis of his activity. The existense and organization of school, the teachers' readiness, the issues of plans, teaching, education and upbringing excited him. Paronyan`s pedagogical heritage can be divived into two parts. The one is about general pedagogical articles and thoughts. The another is associated with specific pedagogical articles which are purposeful for the issues of school, education, teaching and upbringing.